

Newsletter

Delegation of the European Union to Armenia

December 2011 #7(12)

Focus On/խոշոր պլան

EU-Armenia partnership perspectives

Since the beginning of EU-Armenia relations, the EU has been assisting the implementation of the country's reform goals through different projects. The new Head of the EU Delegation to Armenia, Ambassador Traian Hristea, who arrived in Armenia in December 2011, spoke about EU-Armenia relations shortly after starting his duties.

- What is your vision for EU-Armenia bilateral relations?

- We can see a significant evolution of bilateral relations between the European Union and Armenia over the last few years. Armenia declared willingness to get as close as possible to the EU; the response by the institutions of the European Union was quite supportive both in terms of policy dialogue and support to reforms. Therefore, I do think that this good start should only be kept for the future – we should keep all our commitments related to the negotiations on an Association Agreement, and Visa Facilitation and Readmission Agreements (soon to be launched), as well as to discussions on a Deep and Comprehensive Free Trade Agreement. It is very important to underline that all these efforts will be substantiated by rapid progress with reforms on which the EU would offer assistance based on the commitment of the Armenian authorities and the 'more for more' principle confirmed at the Eastern Partnership Warsaw Summit.

- What assistance can we expect from the EU to meet challenges on the way to European Integration?

- The European Union has not only committed itself, but already delivered. We are a trustworthy partner from this perspective. Reforms are still going to be implemented in the fields of Regulatory Framework, Comprehensive Institution Building, issues which are related to a Deep



H.E. Traian Hristea
Head of the EU Delegation to Armenia

and Comprehensive Free Trade Agreement, and other areas. We already have existing commitments, projects and programmes to support Armenia. I would like to underline that the assistance provided under the 'more for more' principle will follow after an important test – the implementation of parliamentary elections that are to be free and fair, and be perceived as free and fair.

- Can you comment on the Association Agreement negotiations?

- In late January we had another round of negotiations in Brussels and now we have already concluded more than 20 chapters. Another round of negotiations will take place this time here in Yerevan. The fast speed of the negotiations so far is a good indicator of the possibility to have much progress in the future.

ԵՄ-Հայաստան համագործակցության հեռանկարները

ԵՄ-Հայաստան հարաբերությունների մեկնարկից ի վեր ԵՄ-ն տարբեր ծրագրերի միջոցով աջակցում է մեր երկրում բարեփոխումների իրագործմանը: Հայաստանում ԵՄ պատվիրակության նորանշանակ ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեան, ով Հայաստան է ժամանել 2011թ. դեկտեմբերին, իր պարտականությունները ստանձնելուց հետո կարծ ժամանակ անց խոսել է ԵՄ-Հայաստան հարաբերությունների մասին:

- Ո՞րն է ԵՄ-Հայաստան երկկողմանի հարաբերությունների Ձեր տեսլականը:

- Վերջին տարիների ընթացքում Եվրոպական միության և Հայաստանի երկկողմ հարաբերություններում էական առաջխաղացում է նկատվում: Հայաստանը ԵՄ-ին հնարավորինս մոտ կանգնելու պատրաստակամություն է հայտնել, իսկ Եվրոպական միության կառույցները լուրջ պատրաստակամությամբ են արձագանքել թե քաղաքական երկխոսության, և թե՛ բարեփոխումներին աջակցություն տրամադրելու հարցերում: Այդ պատճառով՝ կարծում եմ, որ այսպիսի լավ սկիզբը պետք է շարունակել նաև հետագայում, և մենք պետք է հետևենք մեր այն պարտականություններին, որոնք առնչվում են Ասոցացման համաձայնագրի և Վիզային ռեժիմի դյուրացման ու ռեադմիսիայի համաձայնագրերի (շուտով պետք է մեկնարկեն) բանակցություններին, ինչպես նաև Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ քննարկումներին:

Կարևոր է ընդգծել, որ այս բոլոր ջանքերը պետք է ամրապնդվեն բարեփոխումների արագ ընթացքով, որոնց ԵՄ-ն կաջակցի՝ հիմք ընդունելով Հայաստանի պետական կառավարման մարմինների ներգրավ-

վածությունը և «ավելին՝ ավելի դիմաց» սկզբունքը, որը հաստատվել է Արևելյան գործընկերության Վարշավայի գագաթնաժողովում:

- Ինչպիսի՞ աջակցություն կարող ենք ակնկալել ԵՄ-ից՝ Եվրոպական ինտեգրման ճանապարհին առաջացող փորձությունները հաղթահարելու համար:

- Եվրոպական միությունը ոչ միայն պարտավորություններ է ստանձնել, այլև՝ կատարում է դրանք: Այս առումով մենք վստահելի գործընկեր ենք: Դեռ ընթացքի մեջ են բարեփոխումները օրենսդրական դաշտում, հիմնական կարողությունների հզորացման ոլորտում, Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի հետ կապված խնդիրների և այլ հարցերի շուրջ: Մենք արդեն ունենք Հայաստանին աջակցող հանձնառություններ, նախագծեր և ծրագրեր: Կցանկանալի մշել նաև, որ «ավելին՝ ավելի դիմաց» սկզբունքի շրջանակներում տրամադրվող աջակցությունը կհաջորդի մի կարևոր «փորձությունից» հետո. խոսքը խորհրդարանական ընտրությունների մասին է, որոնք պետք է լինեն ազատ և արդար, ինչպես նաև հասարակության կողմից ընկալվեն որպես այդպիսին:

- Ի՞նչ կարող եք ասել Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների վերաբերյալ:

- Հունվարի վերջերին Բրյուսելում ունեցանք բանակցությունների ևս մեկ փուլ և այժմ արդեն համաձայնեցրել ենք ավելի քան 20 գլուխ: Բանակցությունների հերթական փուլն այս անգամ տեղի կունենա Երևանում: Բանակցությունների արագ ընթացքն առայժմ լավ ցուցանիշ է՝ ապագայում մեծ առաջընթաց ունենալու համար:

More Reform, More Support



In recent months the EU AG has provided Armenian authorities with advice on accelerating Armenia's preparations towards a Deep and Comprehensive Free Trade Agreement negotiations with the EU, support on the launch of the EU-Armenia Mobility Partnership and the draft National Strategy on Human Rights Protection.

The Head of the EU Delegation highlighted that the 'more for more' principle would be applied regarding EU-Armenia cooperation: "more financial support, closer political cooperation and deeper economic integration for all those partners who have really embarked on deep reforms", said the Ambassador.

Ավելի շատ բարեփոխումներ՝ ավելի մեծ աջակցություն



2011 թ. դեկտեմբերի 14-ին Հայաստանում ԵՄ պատվիրակության նորանշանակ ղեկավար դեսպան Տրայան Հրիսթեանի և ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի համաձայնագրային տեղի է ունեցել ԵՄ խորհրդատվական խմբի (ԵՄ ԽԽ) ութերորդ նիստը:

Ներկայացվել են ԽԽ-ի եռամսյակային հաշվետվությունը և 2012թ. հունվար-հունիս ամիսների աշխատանքային ծրագիրը:

Վերջին ամիսների ընթացքում ԵՄ խորհրդատվական խումբը ՀՀ պետական մարմիններին տրամադրել է խորհրդատվություն ԵՄ-ի հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցային փուլի նախապատրաստական գործընթացն արագացնելու, ինչպես նաև ԵՄ-Հայաստան Շարժունակության շուրջ գործընկերության մասին համատեղ հռչակագրի նախապատրաստական և Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մշակման նպատակով:

ԵՄ պատվիրակության ղեկավարը ընդգծել է, որ ԵՄ-Հայաստան հարաբերություններում կիրառվելու է «ավելին՝ ավելի դիմաց» սկզբունքը. «Կլինի ավելի մեծ ֆինանսական աջակցություն, ավելի սերտ քաղաքական համագործակցություն և ավելի խորը տնտեսական ինտեգրում բոլոր այն գործընկեր երկրների համար, որոնք իրապես նախաձեռնել են ավելի խորը բարեփոխումների ընթացք», - մշել է դեսպանը:

Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Դեկտեմբեր 2011 #7(12)

Institutional framework reforms

On 16 December 2011 a discussion involving international donors was held on the Comprehensive Institution Building (CIB) programme in Armenia and the Institutional Reform Plans elaborated within the framework of CIB.

The CIB programme is part of the Eastern Partnership and is implemented in other partner countries as well. In Armenia the programme has 3 components: preparations for negotiations on the Association Agreement, for which the Ministry of Foreign Affairs is responsible; justice, freedom and security, implemented by the Ministry of Justice; establishment of a Deep and Comprehensive Free Trade Agreement, the principal component, for which the Ministry of Economy is responsible.

The Minister of Economy, Tigran Davtyan, said that Armenia would participate in the investment, which could be both direct financing and additional means. He also added that these processes were quite comprehensive and that great effort, time and support would be needed not only from the Armenian side, but also from international organisations.

The EU has allocated €32,000,000 for the programme in Armenia.

These institutional reform plans will also serve as a common platform for earmarking national resources as well as the resources of other donors, including the European Union, to support institutional reforms, said Traian Hristea, the new Head of the EU Delegation.



Բարեփոխումներ՝ հաստատված հարթության վրա

2011 թ. դեկտեմբերի 16-ին Երևանում միջազգային դոնորների մասնակցությամբ քննարկվել է Հայաստանում Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագիրը (CIB) և վերջինիս շրջանակներում մշակված Հաստատված բարեփոխումների ծրագիրը:

Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագիրը Արևելյան գործընկերության մասն է կազմում և իրականացվում է նաև գործընկերության մյուս երկրներում: Հայաստանում այն ընթանում է երեք ուղղություններով: ՀՀ արտգործնախարարության պատասխանատվությամբ՝ Առցանց համաձայնագրի բանակցությունների նախապատրաստման աջակցություն, ՀՀ արդարադատության նախարարության պատասխանատվությամբ՝ արդարադատության, ազատության և անվտանգության ապահովման ուղղություն, և ամենաձեռնարկուն՝ հստակ և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծման աջակցող ուղղություն, որն իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանն իր խոսքում նշել է, որ Հայաստանը կմասնակցի ներդրումային գործընթացին, ինչը կարող է լինել ոչ միայն ամբիջակ ֆինանսական միջոցների տեսքով, այլև լրացուցիչ միջոցներով: Նա նաև ավելացրել է, որ այս գործընթացները բավականին ընդգրկում են և կպահանջեն մեծ ջանքեր, ժամանակ և աջակցություն ինչպես հայաստանյան, այնպես էլ՝ միջազգային կազմակերպությունների կողմից:

Նշված երեք ուղղություններով ծրագիրն իրագործելու համար ԵՄ-ն Հայաստանին տրամադրել է 32 մլն եվրո:

«Այս բարեփոխումների ծրագրերը որպես հարթակ կծառայեն ինչպես պետական, այնպես էլ այլ դոնորների ներդրումների համար՝ ներառյալ եվրոպական միությունը», - ասել է ԵՄ պատվիրակության նորանշանակ ղեկավար Տրայան Հրիսթեան:

A new project supporting fair elections in Armenia



The European Union and the OSCE launched a joint project which would support Armenia to conduct elections in line with international standards. The project worth €1,700,000, is financed by the EU and implemented by the OSCE.

During a press conference held on 19

Ընտրությունների աջակցող համատեղ ծրագիր

Եվրոպական միությունը և ԵԱՀԿ-ն նախաձեռնել են համատեղ ծրագիր, որը կաջակցի Հայաստանին՝ միջազգային չափանիշներին համապատասխան ընտրությունների անցկացման հարցում: 1,700,000 եվրո արժողությամբ այս ծրագիրը ֆինանսավորում է ԵՄ-ն, իրականացնում է ԵԱՀԿ-ն:

2012թ. հունվարի 19-ին ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթեան և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Կարել Հոֆստրան մամուլի ասուլիսի ժամանակ մանրամասնել են ծրագրի իմնական դրույթները: ԵՄ-Հայաստան հարաբերությունների հետագա զարգացման համար ընտրությունները կարևոր դեր

January 2012 the Head of the EU Delegation, Traian Hristea, and the Deputy Head of the OSCE Office in Yerevan, Carel Hofstra, highlighted details concerning the project. The elections will play an important role in the future development of EU-Armenia relations. "Holding free and fair elections in Armenia

Journalist "Handbag" contest



On 20 December 2011 the annual journalist "Handbag" contest on coverage migration issues. It was supported by the EU within the scope of the project "Reinforcement of management of migratory flows in Armenia", implemented by the Armenian Branch of "People in Need" NGO.

The main objective of the contest was to prepare journalistic teams to give precise information and professional coverage on migration and its consequent issues. While migration is a natural phenomenon, today there are difficulties surrounding the prevention and management of irregular migration.

"The European Union sees migrants as a source of dynamism and cultural richness", said Jean-Christophe Gayrand, Head of Operations Section of the EU Delegation to Armenia in his speech. While speaking about the particular attention attached to migration by the EU, he also mentioned the Mobility Partnership signed between Armenia and the European Union with the objective of enhancing dialogue and cooperation in that field.

This year 46 applicants took part in the print media, radio and television categories, and 65 materials were submitted, a higher number than in previous years. Participation certificates were presented to all participants, and prizes of 180,000, 90,000 and 45,000 dram were awarded to the first, second and third places.

The EU actively supports Armenia in managing migratory flows and preventing irregular migration. The three-year project "Reinforcement of management of migratory flows in Armenia" directly serves this purpose through a range of measures to improve legislation on returnees, increasing public awareness and sharing best international practices.



Կայացված «Ճամպուկ» մրցանակաբաշխությունը

2011 թ. դեկտեմբերի 20-ին ամփոփվել են միգրացիոն հարցերի լուսաբանմանը նվիրված «Ճամպուկ» ամենամյա լրագրողական մրցույթի արդյունքները: Այն անցկացվում է ԵՄ աջակցությամբ՝ «People in need» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանում միգրացիոն հոսքերի կառավարման հզորացում» ծրագրի շրջանակներում:

Մրցույթի գլխավոր նպատակներից մեկն է պատրաստել լրագրողական այնպիսի քիմ, որը կարողանա համրությանը ներկայացնել ճշգրիտ տեղեկատվություն և պրոֆեսիոնալ լուսաբանում միգրացիայի և դրան հետևող խնդիրների մասին: Թեև միգրացիան բնական երևույթ է, այսօր, սակայն, անկանոն միգրացիան կանխելու և կառավարելու խնդիր կա:

«Եվրոպական միությունը միգրացիոն հարցերի նկատմամբ օրենսդրության բացերը, կմեծացնեն միգրացիայի վերաբերյալ հարաբերական իրազեկվածությունը, ինչպես նաև կփոխանցեն միջազգային լավագույն փորձը:

will be one of the key factors for determining sizes and forms of the EU 'more-for-more' principle announced within the Warsaw Summit of the Eastern Partnership", stated Traian Hristea. The Ambassador pointed out that this was the first time the EU had financed such a programme in Armenia.

The project foresees the strengthening of civil society skills, human rights protection, technical and professional capacities of election commissions, general technical capacities, knowledge and skills of police officers, and the raising of public awareness regarding electoral rights and procedures.

In order to achieve these objectives, the OSCE is planning to conduct training programmes for observers throughout Armenia, to prepare widely available social information and booklets, and to organise training for journalists. Resources will be provided to establish six regional Human Rights Defender offices. Funding will also be allocated for monitoring activities during the pre-electoral campaign, as well as after the election.

մասնագիտական ունակությունների բարելավում, ընտրական իրավունքի և ընթացակարգերի մասին հասարակության իրազեկման բարձրացում:

Այս նպատակների իրականացման համար ԵԱՀԿ-ն նախատեսում է անցկացնել դիտորդների նախապատրաստում հանրապետության ողջ տարածքում, պատրաստել սոցիալական գովազդ և գրքույկներ, իրականացնել լրագրողների վերապատրաստում: Միջոցներ կտրամադրվեն Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) 6 մարզային գրասենյակներ ստեղծելու համար: Ֆինանսավորում կտրամադրվի նաև նախընտրական արշավի և ընտրություններին հաջորդող դիտարկումների իրականացման համար:

արթյուն», - իր խոսքում ասել է ԵՄ պատվիրակության Գործառնական բաժնի ղեկավար ժամ-Քրիստոֆ Գայրանը: Նշելով ԵՄ-ի առանձնակի ուշադրությունը միգրացիոն ոլորտին, նա նաև հիշատակել է Եվրոպական միության և Հայաստանի միջև Շարժունակության գործընկերության համաձայնագրի ստորագրումը՝ միգրացիոն ոլորտում երկխոսությունն ու համագործակցությունն ուժեղացնելու նպատակով:

Այս տարի մամուլի, ռադիո և հեռուստահաղորդումների տարբեր անվանակարգերում դիտորդները 46-ն էին, իսկ ներկայացված նյութերի թիվը՝ 65-ը ինչն, անցած տարիների համեմատությամբ, բավական մեծ առաջընթաց է: Մրցանակաբաշխության մասնակիցները ստացան մասնակցության վկայականներ, իսկ առաջին, երկրորդ և երրորդ տեղերը զբաղված լրագրողներին տրվեցին դրամական պարգևներ համապատասխանաբար՝ 180 000, 90 000 և 45 000 դրամ:



Հայաստանում ԵՄ-ն ակտիվորեն աջակցում է միգրացիոն հոսքերի կառավարման և անկանոն միգրացիան կանխելու գործում: «Հայաստանում միգրացիոն հոսքերի կառավարման հզորացում» եռամյա ծրագիրն անմիջականորեն ծառայում է այդ նպատակին՝ ձեռնարկելով մի շարք միջոցառումներ, որոնք կբարելավեն վերադարձողների նկատմամբ օրենսդրության բացերը, կմեծացնեն միգրացիայի վերաբերյալ հարաբերական իրազեկվածությունը, ինչպես նաև կփոխանցեն միջազգային լավագույն փորձը:

New instrument for migration management



On 7 December a conference dedicated to the recently-established Mobility Partnership between the EU and 10 partner countries, including Armenia, was held in Yerevan. The declaration, aimed at the resolution of migration issues, was signed on 27 October 2011 in Luxembourg.

The Partnership's objective is to improve the mobility of people, at the same time trying to ensure better regulation of migration flows, better prevention and reduction of illegal immigration, as well as the best international standards of practice. Core areas of dialogue include mobility, integration of legal migration, the fight against illegal migration and trafficking, readmission, security of travel documentation, border management, asylum and international protection. EU representative Onno Simons spoke about the

agreement's positive influence, saying that for Armenia this would mean better conditions and possibilities to work in the EU, the improvement of social and economic reintegration for migrants who voluntarily returned, as well as the promotion of diaspora investment. For the EU, this would mean better controlled migration policy, which is currently quite a serious problem. The International Organisation for Migration (IOM) Regional Director, Renate Held, reiterated willingness on behalf of her office to support the implementation of the Mobility Partnership in Armenia, using the knowledge and practice gained in Georgia and Moldova.

The conference was organised by the European Union, the IOM and the Armenian Ministry of Foreign Affairs.

Միգրացիայի կառավարման նոր գործիք

Դեկտեմբերի 7-ին Երևանում տեղի է ունեցել համաժողով՝ նվիրված Եվրամիության և 10 գործընկեր երկրների՝ այդ թվում նաև Հայաստանի միջև վերջերս ստեղծված Շարժունակության գործընկերությանը: Միգրացիոն խնդիրների լուծմանն ուղղված համաձայնագիրը ստեղծվել է 2011թ. հոկտեմբերի 27-ին Լյուքսեմբուրգում:

Գործընկերության նպատակն է բարելավել Հայաստանի և Եվրամիության միջև մարդկանց տեղաշարժը՝ միևնույն ժամանակ ապահովել միգրացիոն հոսքերի հաջող կառավարումը, անօրինական ներգաղթի կանխարգելումը և նվազեցումը, ինչպես նաև՝ միջազգային լավագույն չափանիշների կիրառումը:

Շարժունակություն, օրինական միգրացիայի ինտեգրացիա և զարգացում, պայքար անկանոն և ապօրինի միգրացիայի և բռնության դեմ, ռեադմիսիա, ճանապարհորդական փաստաթղթերի անվտանգություն, սահմանների կառավարում, ապաստարան և միջազգային պաշտպանություն՝ ահա երկխոսության և համագործակցության հիմնաքարային սալարեգները:

ԵՄ ներկայացուցիչ Օնոն Սիմոնսը խոսել է համաձայնագրի դրական ազդեցության մասին՝ ասելով, որ Հայաստանի համար սա նշանակում է ԵՄ-ում աշխատելու ավելի լավ պայմաններ և հնարավորություններ, կամավոր վերադարձողների համար՝ սոցիալական և տնտեսական վերաին-

տեգրման բարելավում, ինչպես նաև սփյուռքի ներդրումների խթանում: Իսկ ԵՄ-ի համար սա նշանակում է լավ կառավարվող միգրացիոն քաղաքականություն, ինչն այսօր բավականին լուրջ խնդիր է աշխարհում:

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տարածաշրջանային ղեկավար Ռենատե Հելդը իրենց գրասենյակի ամունից պատրաստակամություն է հայտնել օժանդակելու Հայաստանում Շարժունակության գործընկերության համաձայնագրի իրականացմանը՝ Վրաստանում և Մոլդովայում կուտակած գիտելիքների և փորձի հիման վրա:

Համաժողովը կազմակերպել էին Եվրոպական միությունը, ՄՄԿ-ը և ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

Children against harmful information

Children have the right to be protected from harmful information. Television ought to broadcast programmes which foster children's education, spiritual and cultural development. This message is stated in the 17th article of the UNICEF Convention on the Rights of the Child; however, are children really protected from the negative impact of television in Armenia?

During a press conference held on 30 November 2011, pupils from Yerevan school 20 after John Kirakosyan had an opportunity to express their opinions on the negative impact of TV and their support for children's educational programmes, presenting a social advertisement based on their initiative. To watch it, please follow this link to Save the Children's Youtube channel:

<http://www.youtube.com/user/SavetheChildrenARM?feature=mhee>

These children are involved in groups using "Child-to-Child" methodology within the EU project "Regional Children's Action for Participation". They consider the

broadcasting of low quality programmes, as well as the lack of educational programmes, as an important issue. To resolve the problem, participants have already met with state officials and broadcasters, as well as conducted surveys and corresponding research.

The "Regional Children's Action for Participation" programme is funded by the EU and implemented by "Save the Children", in cooperation with "The Future Is Yours" NGO. The project is co-funded by the US Agency for International Development through a grant project by "Counterpart International" Armenia. The project is implemented in parallel in Armenia, Azerbaijan and Georgia.



Երեխաներն ընդդեմ վնասակար տեղեկատվության

Երեխան իրավունք ունի պաշտպանված լինելու իրեն վնաս պատճառող տեղեկատվությունից: Հեռուստատեսությունը պետք է հեռարձակի երեխաների կրթությանը, հոգևոր և մշակութային զարգացմանը նպաստող հաղորդումներ: Այս գաղափարն ամրագրված է Միացյալ ազգերի կազմակերպության երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 17-րդ հոդվածում: Սակայն արդյո՞ք երեխաները Հայաստանում պաշտպանված են հեռուստատեսության բացասական ազդեցությունից:

Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի աշակերտները նոյեմբերի 30-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հնարավորություն են ունեցել իրենց խոսքն ասելու ընդդեմ հեռուստատեսության բացասական ազդեցության և հոգևոր մանկապատանեկան գիտակրթական հաղորդումների՝ ներկայացնելով իրենց նախաձեռնությամբ պատրաստված սոցիալական տեսահոլովակը: Այն կարելի է դիտել հետևյալ հասցեով՝

<http://www.youtube.com/user/SavetheChildrenARM?feature=mhee>

Այս երեխաներն ընդգրկված են «Տարա-

ծառայության նախաձեռնություն հանուն երեխաների մասնակցության» ԵՄ ծրագրի շրջանակներում հիմնված «Երեխան երեխայի համար» մեթոդաբանությամբ գործող խմբերում: Նրանք վնասակար են համարում անորակ հաղորդումների հեռարձակումը, ինչպես նաև խնդիր են համարում կրթական հաղորդաշարերի խիստ սակավությունը: Խնդիրը լուծելու նպատակով մասնակիցներն արդեն հանդիպել են պետական պաշտոնյաների և հեռուստատեսության համար պատասխանատու անձանց հետ, հարցումներ անցկացրել և կատարել համապատասխան ուսումնասիրություններ:

«Տարածաշրջանային նախաձեռնություն հանուն երեխաների մասնակցության» ծրագիրը ֆինանսավորում է ԵՄ-ն և իրականացնում «Սեյլ դը չիլդրեն» միջազգային կազմակերպությունը՝ «Ապագան բոն է ե» ՀՀ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը համաֆինանսավորում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը՝ «Քաունթերփարթ ինթերնեշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչության դրամաշնորհային ծրագրի միջոցով: Ծրագիրը զուգահեռ իրականացվում է Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում:

State aid: main condition to ensure competition

The EU Twinning Project "Strengthening the Enforcement of Competition and State Aid Legislation in Armenia" is continuing to help improve competition and strengthen legal frameworks in Armenia. On 6-7 December 2011 the project held a seminar on competition focusing on the "Main Criteria Constituting State Aid".

During practical discussions, short term Experts from Germany, Mr. Buesching and Mr. Homann, selected EU competition legislation as a guideline, where an important role is played by state aid, allocated to organisations from the state resources. In this regard, state resources

are a wide concept, including both direct provision of grants, and low credit rates exempt from debts and subsidies.

According to experts, there was no clear list of what could be considered as state aid: any measure taken by the state which contributes to the development of enterprises could be considered as such.

The Twinning Project is implemented by the Armenian State Commission for the Protection of Economic Competition jointly with the German Ministry of Economy and Technology, and the Lithuanian Competition Council with a budget of €1,100,000.

Պետական օժանդակությունը՝ մրցակցության ապահովման կարևոր պայման



Հայաստանում մրցակցային դաշտը բարելավելու և օրինականորեն նրա դիրքերն ամրապնդելու նպատակով շարունակում է միջոցառումներ ձեռնարկել «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» ԵՄ Թվիհինգ ծրագիրը:

2011թ. դեկտեմբերի 6-7-ը ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել մրցակցությանն ուղղված հերթական սեմինարը, այս անգամ՝ «Պետական օժանդակության հիմնական չափանիշները» թեմայով:

Գործնական քննարկումների ընթացքում Գերմանիայից ժամանած կարճաժամկետ փոր-

ձագետներ (short term Experts) պրն. Բյուշինգը և պրն. Հոմանը որպես ուղեցույց ընտրել են ԵՄ մրցակցային օրենսդրությունը, որտեղ կարևոր տեղ է զբաղեցնում պետության կողմից կազմակերպություններին տրամադրվող օժանդակությունը: Այն կարող է դրսևորվել մի քանի ուղիներով՝ պետական ռեսուրսների օգնությամբ: Այս առումով պետական ռեսուրսը լայն հասկացողություն է, որն իր մեջ ներառում է ինչպես դրամաշնորհների անմիջական տրամադրումը, այպես էլ՝ ցածր տոկոսադրույթով վարկերը, պարտքերից ազատումը, սուբսիդիաները:

Փորձագետների կարծիքով՝ չկա հստակ ցուցակ, թե որն է համարվում պետական օժանդակություն. այդպիսին կարելի է համարել պետության կողմից ձեռնարկված ցանկացած միջոցառում, որը նպաստում է տվյալ ձեռնարկության զարգացմանը:

Հիշեցնենք, որ ԵՄ կողմից ֆինանսավորվող 1,100,000 եվրո արժողությամբ այս ծրագիրն իրականացվում է ՀՀ ՏՄՊԴՀ-ի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Էկոնոմիկայի և տեխնոլոգիայի նախարարության և Լիտվայի Հանրապետության մրցակցության խորհրդի համատեղ ջանքերով:

Favourable conditions for doing business



On 7 December a two-day international seminar on "Better regulation: Challenges and Trends" started.

Since 2010 the EU has supported Armenia in implementing business reforms through the Twinning Project "Support to the Ministry of Economy of the Republic of Armenia: Regulatory Management/Standard Cost Model". During the conference the project chief coordinator, first Deputy Minister of Economy Karine Minasyan stressed continuing EU assistance through a range of projects to develop the business sector in her welcoming speech.

The aim of the project is to make administrative regulations transparent and to lessen administrative red tape, which would attract not only Armenian investors, but also foreign entrepreneurs. International experts from Finland, Latvia and Estonia participated in the conference. They presented a regulatory impact assessment in Armenia and spoke about the improvement of legislative systems.

"Knowledge of the changes in countries undergoing a transition period like Latvia or Estonia is very relevant to Armenia. Let's learn from them and let's also focus on what should be avoided according to their experience", said Jean-Christophe Gayrand, Head of the Operations Section of the EU Delegation.

Լպաստավոր պայմաններ բիզնեսի համար

Դեկտեմբերի 7-ին մեկնարկել է «Արդյունավետ կարգավորում. մարտահրավերներ և զարգացումներ» խորագրով երկօրյա միջազգային համաժողովը:

2010թ. ից ի վեր ԵՄ-ն օժանդակում է Հայաստանում բիզնես ոլորտում բարեփոխումներ իրականացնելու հարցում «Աջակցություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը. կարգավորման կառավարում/Ստանդարտ ծախսերի մոդել» Թվիհինգ ծրագրի միջոցով: Համաժողովին բացման խոսքով հանդես է եկել ծրագրի համակարգող, ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կարինե Մինասյանը՝ կարևորելով ԵՄ ներդրումը գործարարության ոլորտի բարելավման նպատակով մի շարք ծրագրերի շարունակականության հարցում:

Ծրագրի նպատակն է թափանցիկ դարձնել վարչական կանոնակարգերը և նվազեցնել վարչական բեռը՝ այսպիսով գրավելով ոչ միայն հայաստանյան, այլև օտարերկրյա գործարարներին: Համաժողովին մասնակցել են նաև միջազգային փորձագետներ Ֆինլանդիայից, Լատվիայից և Էստոնիայից, որոնք ներկայացրել են Հայաստանում իրականացվող ակտիվ ազդեցության գնահատման համակարգը և խոսել են օրենսդրական դաշտի բարելավման մասին:

«Անցումային շրջանում գտնվող երկրները, ինչպես օրինակ Լատվիան կամ Էստոնիան, շատ նման են Հայաստանին: Եկեք սովորենք և հասկանանք, թե ինչից պետք է խուսափել՝ հիմնվելով այդ երկրների փորձի վրա», - ասել է ԵՄ գործառնական բաժնի ղեկավար Ժան Քրիստոֆ Գայրանդը:



ՆՏԵԻ-ն Եվրոպական միության մարմին է, որը հիմնադրվել է 2008թ. մարտին: Վերջինիս նպատակն է բարձրացնել Եվրոպայի կայուն աճն ու մրցակցությունը՝ ԵՄ-ի նորարարական կարողությունը հզորացնելու ուղղությամբ:

Ինստիտուտը պատրաստում է նորարարների և գործարարների նոր սերունդ: Այդ նպատակով ՆՏԵԻ-ն ստեղծել է համալիր կառույցներ, (գիտության և նորարարության

Նորարարությունների և տեխնոլոգիաների Եվրոպական ինստիտուտ

համայնքներ) որոնք միմյանց են կապում բարձրագույն կրթության, հետազոտական և գործարար ոլորտները՝ այդպիսով խթանելով նորարարության և ձեռներեցության զարգացումը: ՊՆՅ-ն կենտրոնանում է բարձր հասարակական ազդեցություն ունեցող գերակա թեմաների վրա, ներկայումս դրանք են՝ կլիմայական փոփոխությունների մեղմացում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, կայուն էներգետիկա:

Ավելի ամփոփ՝ ՆՏԵԻ-ի նպատակն է ավելի սահուն դարձնել հետևյալ անցումները. *գաղափարից դեպի ապրանք, լաբորատորիայից դեպի շուկա, ուսանողից դեպի գործարար*՝ բարձր հասարակական պահանջարկի մեջ ներառելով գիտության եռանկյունու երեք կողմերը՝

բարձրագույն կրթություն, հետազոտություն և գործարարություն:

ՆՏԵԻ-ն իր գործառույթներն իրականացնում է Բուդապեշտում (Հունգարիա), տնօրեն խոսե Մանուել Լեսետանի ղեկավարությամբ: Գիտության և նորարարության համայնքները Եվրոպայում տեղակայված 17 կենտրոնների միջոցով միավորում են հարյուրավոր գործընկերների:

ՆՏԵԻ-ն ղեկավարում է կառավարիչների խորհուրդը, որը կազմված է կրթության, հետազոտական և գործարարության բնագավառներում առաջատար անհատներ հանդիսացող 22 անդամներից:

<http://eit.europa.eu/about/overview.html>

EU candidate countries/ԵՄ թեմաժու երկրներ




Լրիվ անվանումը՝ Զեռնոգորիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Պոդգորիցա:
Պետական կառուցվածքը՝ Հանրապետություն:
Տարածքը՝ 14 026 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 0.6 մլն:
Պետական լեզուն՝ սերբերեն:
Կրոնը՝ ուղղափառ՝ 72%, մուսուլման՝ 16%, կաթոլիկ՝ 3%:
Տարադրամը՝ եվրո:



Լրիվ անվանումը՝ Իսլանդիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Ռեյկյավիկ:
Պետական կառուցվածքը՝ Սահմանադրական հանրապետություն:
Տարածքը՝ 103 000 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 0.3 մլն:
Պետական լեզուն՝ իսլանդերեն:
Կրոնը՝ ավետարանական կրթերական՝ 83.1%, կաթոլիկ՝ 2.4%:
Տարադրամը՝ իսլանդական կրոն:



Լրիվ անվանումը՝ Թուրքիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Անկարա:
Պետական կառուցվածքը՝ Հանրապետություն:
Տարածքը՝ 780 580 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 71.5 մլն:
Պետական լեզուն՝ թուրքերեն, քրդերեն:
Կրոնը՝ մուսուլման՝ 99.8%:
Տարադրամը՝ թուրքական լիրա:



Լրիվ անվանումը՝ Խորվաթիայի հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Չագրեբ:
Պետական կառուցվածքը՝ Պառլամենտական Հանրապետություն:
Տարածքը՝ 56 542 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 4.4 մլն:
Պետական լեզուն՝ խորվաթերեն:
Կրոնը՝ կաթոլիկ՝ 85%, ուղղափառ՝ 5%, մուսուլման՝ 1.3%:
Տարադրամը՝ խորվաթական կունա:



Լրիվ անվանումը՝ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Սկոպյե:
Պետական կառուցվածքը՝ պառլամենտական դեմոկրատիա:
Տարածքը՝ 25 433 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 2.05 մլն:
Պետական լեզուն՝ մակեդոներեն:
Կրոնը՝ ուղղափառ՝ 67%, մուսուլման՝ 30 %:
Տարադրամը՝ մակեդոնական դինար:

ԲԱՌԱՐՆ

● **ԵԶԶ Գործողությունների ծրագրեր.** Երկկողմանի համաձայնություններ են ԵՄ-ի և նրա 12 հարևան երկրների միջև: Դրանք ԵԶԶ-ի կենտրոնական տարրերն են և գործնականում՝ «ճանապարհային քարտեզ» երկու կողմերի համար: 3-5 տարի տևող գործողությունների այս ծրագրերը սահմանում են քաղաքական ու տնտեսական բարեփոխումների օրակարգ՝ ըստ կարճաժամկետ ու միջնաժամկետ առաջնահերթությունների: Իսկ ծրագրերի իրագործումը խթանվում և վերահսկվում է համատեղ ենթահանձնաժողովների միջոցով:

● **Եվրոպական ներդրումային բանկ (EIB-ԵՆԲ).** հիմնադրվել է ԵՄ-ի կողմից՝ ներդրումային վարկեր և դրամաշնորհներ տրամադրելու նպատակով: Անդամ երկրները բաժնետերեր են, իսկ բանկի կառավարիչների խորհրդում ընդգրկվում են այդ երկրների ֆինանսների նախարարները: ԵՆԲ-ն ֆինանսական լծակներ ունի հատկապես ԵԶԳ հարավի և Եվրամիջերկրամասյան ներդրումային գործընկերության ֆոնդի (FEMIP) համար: Բանկը ակտիվ է նաև ԵԶԳ արևելքում, որտեղ սկսած 2001թ-ից ավելացրել է իր գործունեության մանդատները, և շրջանակային համաձայնագրեր են կնքվել առանձին երկրների հետ:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia
21 Frik str, Yerevan, Armenia Entrance from Proshyan str.
Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm; e-mail: Delegation-Armenia@eeas.europa.eu; <http://eunewsletter.am>
The Newsletter is prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Հայաստանում
Հայաստան, Երևան, Ֆրիկի փողոց, 21, (մուտքը Պռոշյան փողոցից)

Հեռ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, էլ. փոստ՝ http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm; e-mail: Delegation-Armenia@eeas.europa.eu; <http://eunewsletter.am>
Հաղորդագիրը պատրաստել է ՇԱՐՄ Հոլդինգը